ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱԻՐԱ ԿԻԼԻՉՅԱՆԻ ՖՐԱՆՍԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գործուղված անձ

   Նաիրա Կիլիչյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության վարչության ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

3. Գործուղման վայրը և ժամկետները

   Ֆրանսիա, Փարիզ, հունիսի 17-18-ը, 2026 թ.

4. Հրավիրող կողմը

   ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակույթի բաժին

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

- Մասնակցություն ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայի անդամ պետությունների 11-րդ Գլխավոր համաժողովին՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգության փորձագետ

6. Քննարկված թեմաները

- ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Կոմիտեի հաշվետվությունը Գլխավոր համաժողովին (2024-2025 թթ.), որում ներկայացվեցին ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ձեռքբերումները, մասնավորապես նշվեց, որ նշյալ տարիների ընթացքում Կոնվենցիայի ցանկերում 135 հայտ է գրանցվել (111 ներկայացուցչական, 6 լավ փորձ, 13 անհապաղ պաշտպանություն, ներառյալ՝ տարբեր ցանկերից տեղափոխված հայտերի թիվը).
- Կոնվենցիայի Միջկառավարական Կոմիտեի նոր անդամների ընտրությունը, որի ընթացքում քառամյա ժամկետով հաստատվեց մի շարք երկրների անդամակցումը Կոմիտեին (Ալբանիա, Բուլղարիա, Կամբոջիա, Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Ճապոնիա, Կորեա, Գվատեմալա, Ջիբութի, Գվինեա, Մալի, Օման, Նորվեգիա).
- Կոնվենցիայի քարտուղարության և «Հասարակական կազմակերպությունների ֆորումի» հաշվետվությունները (2024-2025 թթ.).

- Կոնվենցիայի իրականացման գործառնական հրահանգների առաջարկվող վերանայումները, որոնք ուղղված են հայտերի պատրաստման ընթացքում դիտարկումների ամբողջացման եռամսյա ժամկետին, պարբերական զեկույցների միասնական համակարգին և միջազգային համագործակցությանը.
- Ոչ նյութական մշակութային ժառանգության հիմնադրամի միջոցների օգտագործումը, որի ընթացքում կարևորվեցին կամավոր ներդրումները և դրանց միջոցով ծրագրերի արդյունավետ իրականացման ապահովումը.
- Կոմիտեին խորհրդատություն ապահովելու նպատակով հասարակական կազմակերպությունների հավատարմագրումը, որի ընթացքում նշվեց, որ հավատարմագրման էին դիմել 96 հասարակական կազմակերպություն և դրանցից 59 են հավատարմագրվել: Նստաշրջանի ընթացքում հայկական «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպությունը հավատարմագրվեց որպես Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության միջկառավարական կոմիտեին խորհրդատվական կարգավիճակով աջակցող հասարակական կազմակերպություն՝ ի ճանաչում ոլորտում ունեցած իր մասնագիտական փորձառության.
- Կոնվենցիայի նոր ընթացակարգերի շրջանակում տարածաշրջանային պարբերական զեկույցների համակարգից անցում դեպի միասնական համակարգ և կարողությունների զարգացման գործունեության խթանում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության մասին» կոնվենցիայի անդամ պետությունների 11-րդ Գլխավոր համաժողովին մասնակցում էին Կոնվենցիային միացած 185 երկրի 650 մասնակից:

Մասնակցեցի համաժողովին՝ հանդես գալով մեկ ելույթով և մի շարք քննարկումներով.

- Հասարակական կազմակերպությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրվելու քարտուղարության զեկույցի շրջանակում ելույթ ունեցա՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ոլորտում առանձնահատուկ կարևորում է պետություն–քաղաքացիական հասարակություն համագործակցությունը՝ այն դիտարկելով որպես արդյունավետ և կենսունակ մշակութային քաղաքականության հիմնարար ուղղություններից մեկը:

Միևնույն ժամանակ ընդգծեցի, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իրականացնելով բաց և թափանցիկ մշակութային քաղաքականություն, ամեն տարի դրամաշնորհային ծրագրերի միջոցով ֆինանսական աջակցություն է տրամադրում մշակութային հասարակական կազմակերպություններին, որոնք ուղղված են համայնքներում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանը, փոխանցմանը և հանրահռչակմանը:

Հայաստանի համար առանձնահատուկ կարևոր և խորհրդանշական իրադարձություն է «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպության հավատարմագրումը Կոնվենցիայի շրջանակում գործող խորհրդատվական մարմինների շարքում: Սա Հայաստանից արդեն երկրորդ հասարակական կազմակերպությունն է, որն արժանանում է նման բարձր միջազգային ճանաչման: Առաջինը 2020 թ. հավատարմագրված «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնն» էր:

Այս ձեռքբերումը վկայում է, որ Հայաստանի քաղաքացիական հասարակությունն այսօր ոչ միայն ակտիվ դերակատար է մշակութային գործընթացներում, այլև միջազգային մակարդակում հանդես է գալիս որպես վստահելի և մասնագիտական գործընկեր՝ հիմնված համայնքների հետ աշխատանքի փորձառության, գիտելիքի և պատասխանատվության վրա.

- Հանդիպեցի Կոնվենցիայի քարտուղարության տարածաշրջանային համակարգող Հելենա Դրոբնային, որի հետ քննարկվեց ՅՈՒՆՍԿՕ-ի միջազգային աջակցության հիմնադրամին Հայաստանի ներկայացրած հայտի ընթացիկ վիճակը և Հայաստանում ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության քաղաքականության կարևորումը, որի վկայությունն է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում ոչ նյութական մշակութային ժառանգության բաժնի ստեղծումը.
- Միևնույն ժամանակ հանդիպումներ ունեցա Իրանի, Սերբիայի, Ուկրաինայի, Ֆինլանդիայի, Մոլդովայի, Ավստրիայի մշակութային ժառանգության փորձագետների հետ՝ քննարկելով «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակում տեղական, ազգային և միջազգային ծրագրերի իրականացմանն առնչվող մի շարք հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Հաստատվեցին Կոնվենցիայի կիրարկման գործառնական հրահանգների փոփոխությունները, որոնք առաջարկվել էին միջազգային փորձագետների կողմից.
- Հաստատվեց Կոնվենցիայի Միջկառավարական Կոմիտեի նոր անդամների ընտրությունը.
- Հաստատվեց տարածաշրջանային պարբերական զեկույցների համակարգից դեպի միասնական համակարգ անցման գործընթացը.
- Հաստատվեց 59 հասարակական կազմակերպությունների հավատարմագրումը, այդ թվում՝ «Մշակույթը հանուն կայուն զարգացման» հասարակական կազմակերպությանը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- Շարունակել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ներկայացուցչական և անհապաղ պաշտպանության ցանկերում ՀՀ հայտերի պատրաստամն և գրանցման ներկայացնելու գործընթացը՝ առանձնահատուկ կարևորելով համայնքների, մշակութային խմբերի և անհատ կրողների տեղն ու դերը.
- Համատեղ հայտեր գրանցելու նպատակով շարունակել բանակցությունները այլ երկրների հետ, ինչպես նաև հստակեցնել Իրանի Իսլամական Հանրապետության, Եգիպտոսի, Ռումինիայի և Հնդկաստանի հետ համատեղ հայտեր պատրաստելու հետագա հնարավորությունները.

- ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրված Հայաստանի երկու հասարակական կազմակերպությունների թեկնածությունը, որպես փորձագետ կազմակերպություն, ներկայացնել Կոնվենցիայի քարտուղարությանը.
- ՅՈՒՆԵՍԿՕ-ում հավատարմագրման ներկայացնել Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում գործունեություն ծավալող հերթական հասարակական կազմակերպության թեկնածությունը.
- Ձեռնարկել «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի շրջանակում պատրաստվող Հայաստանի պարբերական զեկույցի մեկնարկը, որի ներկայացման ժամկետը մինչև 2027 թ. հունիսն է:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Հունիս 22, 2026 թ.

Նաիրա Կիլիչյան